ԳԱՅԱՆԵ ՏԱՃԱՐԻ 1350-ԱՄՅԱԿԸ

Մեր թվականության 5-6-րդ դարերը շատ նշանակալից եղան հայ մշակույթի ու արվեստի աննախադեպ վերընթացի համար: Նույն ժամանակներում էր, որ ժողովրդի ճարտարապետական հանճարը շռայլորեն երկնում էր տարբեր նշանակության ու տարբեր ձևերի շինությունների հորինվածքներ, բոլորը նոր ու զանազան, յուրօրինակ ու հետաքրքիր և արվեստով կատարյալ:

Յոթերորդ դարի հայ պատմիչ Սեբեոսը հաղորդում է, որ կաթողիկոս Կոմիտասը քանդում է Սուրբ Սահակի կառուցած Սուրբ Հռիփսիմեի մատուռը, որ ցածր էր ու մթին և ինչպես վկայում է նաև Հովհաննես կաթողիկոսը, նրա տեղում կառուցում է «հրաշապես ու վայելուչ, և նազելի, և պայծառ շինվածքով» այն շինությունը, որ կանգուն է նաև մեր օրերում: Կոմիտասը Հռիփսիմեի աճյունը ամփոփում է տաճարի սեղանի՝ արևելյան խորանի տակ, նոր ստեղծված դամբարանում, ուր այժմ էլ մուտք կա Հռիփսիմե հաճարի հյուսիս-արևելյան ավանդատնից:

Կաթողիկոս Կոմիտասի օրինակով 630 թվականին, մեզանից ուղիղ 1350 տարի առաջ կաթողիկոս Եզրը Սուրբ Գայանեի մատուռի վրա կառուցում է մի հրաշակերտ եկեղեցի, որի հարավ-արևելյան ավանդատնով աստիճանները տանում են արևելյան խորանի տակ, ուր իր դամբարանում ամփոփված է Սուրբ Գայանեի աճյունը:

Եզրի կառուցած Գայանեի տաճարը Էջմիածնում հայ ճարտարապետության դասական հուշարձաններից է, որի կառուցման 1350-րդ տարելիցը այս օրերին հանդիսավորությամբ նշում է ոչ միայն ճարտարապետական հասարակայնությունը այլև մեր ողջ ժողովուրդը:

Գայանե տաճարը, որպես ճարտարապետական կառուցվածք, գմբեթավոր բազիլիկ է, ըստ որում, արևելյան-հայկական տիպի, որ որոշակի տարբերություններ ունի արևմտյան տիպի բազիլիկներից: Տաճարների այդ տիպի առաջնեկը Գայանեի տաճարն է, որ արդյունք է բազիլիկ և կենտրոնագմբեթ տիպերի համատեղման ու

վերամշակման: Կան հանգամանքներ, որ հիմք են տալիս մտածելու, թե ավելի վաղ է կառուցվել Օձունի գմբեթավոր բազիլիկը (VI դարի 2-րդ կեսում):

Այդ տիպի տաճարների մյուս օրինակը մեզանում Բագավանի հայտնի տաճարն է, շատ մեծ չափերով, որ նույնպես կառուցվել է կաթողիկոս Եզրի օրոք, ճարտարապետ Իսրայելի կողմից (631-639 թթ.):

639-640 թվերին է ավարտվել տաճարների նույն տիպին պատկանող Դավիթ Սահառունու նախաձեռնությամբ կառուցված Մրենի տաճարը, որ նույնպես մեր ճարտարապետության դասական օրինակներից է: Հուշարձաններից այս վերջին երկուսը գտնվում են սովետական տերության սահմաններից դուրս և մեր ձեռքի տակ եղած նյութերը պահպանվում են նախասովետական շրջանի հետազոտություններից:

Ավելի ուշ Գայանեի տիպի տաճարներ են կառուցվել նաև հայկական գաղթօջախներում: Նույն տիպի տաճարներից է Վրաստանի հնագույն հուշարձաններից Ծրոմին:

Գայանեի բազիլիկան եռանավ է, որ արդյունք է երկայնական ուղղությամբ դասավորված երկու շարք սյուների, որոնք միմյանց կապված են կամարներով, սրանք էլ իրենց վրա կրում են երկայնական պատերը: Բազիլիկան գմբեթավորելու համար սրահը ընդլայնական ուղղությամբ խաչաձևել են նույնպես մի նավով, որի լայնքը հավասարվում է երկայնական միջին նավի լայնքին: Այս երկու նավերի խաչաձևումով ստացված խաչմերուկի վերևում բարձրանում է գմբեթը: Եվ որովհետև այլ բազիլիկների համեմատությամբ Գայանեի երկարությունը բավական փոքր և հիմքում խաչաձև է, այս տաճարը հարում է նաև խաչագմբեթարդ տիպի տաճարներին:

Գայանեի ամենաարժեքավոր կողմերից է այն, որ նա սկզբնական կառուցումից ի վեր պահպանվում է անխաթար, և որ կրած ամեն կարգի նորոգումները չեն եղծել նրա հիմնական հորինվածքը, կարևոր մասերը, ու հատկապես ներսը: Այս այն հուշարձաններից մեկն է, որի ճարտարապետական ձևավորումը և ճարտարագիտական կառուցվածքը կապված են փոխադարձ պայմանավորվածությամբ և կազմում են մի կուռ

միասնություն. չկա մի ավելորդ մաս նրա կրող օրգանիզմում, և չկա մի զարդ, որ լինի ինքնանպատակ, կտրված կրող օրգանիզմից:

Ինչպես բոլոր մասնագետներն են միմյանց ակամայից կրկնում իրենց հետազոտություններում, հուշարձանում ամեն ինչ պատճառաբանված է, տրամաբանված, հղացած է ստեղծագործողի նրբաճաշակ զգացումով և իրագործված կառուցողի հմուտ վարպետությամբ: Այստեղ հստակ է գաղափարը, պարզ են ձևերը, համաչափ են դրվագները: Տաճարը ներսից հոյակապ է, սլացիկ, ամբողջական, առինքնող:

1350 տարիների հեռվից Գայանեն կառուցող հանճարեղ ճարտարապետը իր ստեղծագործության պես պարզ ու բոլորին հասկանալի լեզվով խոսք է բացել մեր այսօրվա կառուցողների հետ, քննարկում է ապագայի հարցերը, ներշնչելով հավատ գալիք օրերի խոյանքի նկատմամբ:

Տիրան Մարության

[1980 թ.]